կան յազգէն հայոց և աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ վասն ծայրագոյն իշխանութեան մէջ քաղաքաց կառավարելոյ և 'ի տանէն հայոց տացի սոցայ նամակ պաշտօնատարութեան երիս ամաց ժամանակաւ ըստ նմանութեան Օրինակին։

ԳԼՈՒԽ ԻԹ.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս վաթսուն սեպհական յազգէն հայոց և աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ վասն մայր դատաւորութեան, և 'ի տանէն հայոց տացի նոցա նամակ պաշտօնատարութեան մայր դատաւորի, ժամանակաւ երիս ամաւ նստել աթոռ իւրաքանչիւրում քաղաքի դատել ժողովուրդս ըստ Օրինօքն հայաստանեաց, նամակ սոցայ ըստ նմանութեան Օրինակին։

ԳԼՈՒԽ Լ.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս ինանուն սեպհական յազգէն հայոց և աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ վասն հազարապետութեան, 'ի տանէն հայոց տացի սոցայ նամակ պաշտօնատարութեան հազարապետութեան ժամանակաւ